evocaBANK

ԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Կոդ PRD22-0001-45 INT		Խմբագրություն 03
Կազմեց	Հավանության արժանացավ	Հաստատված
Ներդրումային ծառայությունների բաժին	Վարչության 31/10/2022թ.թիվ 41 արձանագրությամբ Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան_____	Խորհրդի 21/03/2023թ. թիվ 05 արձանագրությամբ Խորհրդի նախագահ՝ Վարուժան Ավետիքյան_____

Կիրառման ոլորտ	Հաճախորդների սպասարկումն իրականացնող ստորաբաժանումներ, Ներդրումային ծառայությունների բաժին
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Ներդրումային ծառայությունների բաժին, ինչպես նաև Բրոքերային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված կառուցվածքային ստորաբաժանումներ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	22/03/2023թ.
Վերանայման վերջնաժամկետ	17/02/2027թ.
Ուժը կորցնելու ամսաթիվ	

1. Նպատակը

Սույն Կարգով սահմանվում են Հաճախորդների կողմից Բանկ ներկայացված Արժեթղթերով գործարքների կնքման, Պատվերների ընդունման, հաղորդման, ինչպես նաև Բրոքերային ծառայությունների մատուցման ընդհանուր սկզբունքները:

2. Սահմանումներ և հապավումներ

- **Բանկ** – «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ:
- **Կարգ** – Արժեթղթերի շուկայում Բրոքերային ծառայությունների մատուցման կարգ:

3. Հավելվածներ[1]

RUL15-0004-05_1	Արժեթղթերի շուկայում Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ
RUL15-0004-05_1_1	Բրոքերային և դեպո հաշիվների բացման դիմումի օրինակելի ձև
RUL15-0004-05_1_2	Ներդրումային ծառայություններից օգտվելու գիտելիքների ու փորձի մասին տեղեկացման թերթիկի օրինակելի ձև
RUL15-0004-05_1_3	Հաճախորդի դասակարգման վերաբերյալ տեղեկացման օրինակելի ձև
RUL15-0004-05_1_4	Պրոֆեսիոնալ հաճախորդի դասակարգման արդյունքների համաձայնության վերաբերյալ հայտարարության օրինակելի ձև
RUL15-0004-05_1_5	Արժեթղթերի գնման/վաճառքի պատվերի օրինակելի ձև
RUL15-0004-05_1_6	Գործարքի վավերագրի օրինակելի ձև
RUL15-0004-05_1_7	Պատվերով գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձև

4. Ընդհանուր դրույթներ

4.1. Բանկը մատուցում է Բրոքերային ծառայություններ ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընդգրկված որևէ պետությունում հրապարակային առաջարկին (վաճառքին) և/կամ առևտրին թույլատրված կամ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող Կարգավորող շուկաների ցանկում ընդգրկված որևէ Կարգավորող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով:

4.2. RUL15-0004-05_1 հավելվածով սահմանված Կանոնները մշակվում են «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի», «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ և այլ իրավական ակտերի համապատասխան:

[1] *Հավելվածները հաստատվում են Բանկի Վարչության կողմից:*

Հաստատված
Բանկի Վարչության
11/02/2026թ.
թիվ 05_01 արձանագրությամբ
Ուժի մեջ է 17/02/2026թ.ից

1. Նպատակը

Սույն Կանոնները սահմանում են Հաճախորդների կողմից Բանկ ներկայացված Արժեթղթերով գործարքների կնքման, Պատվերների ընդունման, հաղորդման, ինչպես նաև Բրոքերային ծառայությունների մատուցման կանոնները:

2. Սահմանումներ և հապավումներ

- **Բանկ** – «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ:
- **Կանոններ** – Արժեթղթերի շուկայում Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ:
- **Արժեթուղթ** – ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով որպես արժեթուղթ սահմանվող ցանկացած գույքային իրավունք:
- **Բրոքերային ծառայություններ** – Հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում:
- **Պայմանագիր**– Բրոքերային ծառայություններից օգտվելու համար Բանկին դիմած անձի և Բանկի միջև կնքված փաստաթուղթ, որում սահմանվում են տվյալ անձի Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման, կատարման, ծառայությունների դիմաց վճարման, հաշվետվողականության և դրանց հետ կապված կողմերի իրավահարաբերությունները:
- **Բրոքերային հաշիվ**– Բանկում բացված, դրամային և/կամ արտարժութային հաշիվ, որը նախատեսված է Կանոններով ու Պայմանագրով նախատեսված և բրոքերային գործառնություններից բխող Հաճախորդի և Բանկի միջև փոխադարձ հաշվարկների իրականացման համար:
- **Կարգավորվող շուկա**– հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպչական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգ, որը կանոնավոր կերպով արժեթղթերի առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաները:
- **Չկարգավորվող շուկա**– Կարգավորվող շուկայից դուրս Արժեթղթերով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կատարվող գործարքների ամբողջություն:
- **Ներդրումային գործառնությունների բաժին**– Բանկի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է Բրոքերային ծառայությունների շրջանակներում Հաճախորդների սպասարկումը:
- **Հաճախորդ**– անձ, որի հետ Բանկն ունի բրոքերային ծառայությունների մատուցման կամ բրոքերային հաշվի վերաբերյալ գործող պայմանագիր:
- **Պատասխանատու աշխատակից**– Հետգործառնական վարչության աշխատակից, որը Բրոքերի կողմից ներկայացված Գործարքի վավերագրի հիման վրա իրականացնում է Հաճախորդների Պատվերների հիման վրա կնքված գործարքների հաշվառումն ու վերջնահաշվարկը:
- **Բրոքեր** – Բանկի Ներդրումային գործառնությունների բաժնի աշխատակից, որի վրա Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով դրված է Բրոքերային ծառայություններ իրականացնելու պարտականությունը:
- **Պատվեր**– Հաճախորդի կողմից Բանկին տրվող և Հաճախորդի Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով Բանկի կողմից գործարքի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:
- **Գործարքի վավերագիր**– գործարքը կնքող Բրոքերի կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և Պատասխանատու աշխատակցին ներկայացվող փաստաթուղթ:
- **Հերթ**– Բոլոր Հաճախորդների կողմից Բանկ ներկայացված, բայց դեռևս չկատարված Պատվերների հաջորդականություն: Հաճախորդների Պատվերները կատարվում են ըստ դրանց ստացման հերթականության՝ ելնելով պատվերի տեսակից և շուկայի իրավիճակից:
- **Բավարարել լրիվ պատվեր**– Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ նրանում նշված քանակով արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանով:
- **Բավարարել մասնակի պատվեր**– Պատվեր, որը նախատեսում է Պատվերի մասնակիորեն կատարում՝ մնացորդը Պատվերների հերթում ընդգրկելու պայմանով:

- **Հանել մնացորդը պատվեր**– Պատվեր, որը նախատեսում է Պատվերի անմիջապես կատարում Պատվերում նշված արժեթղթի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը Պատվերների հերթում չընդգրկելու պայմանով:
- **Անմիջապես բավարարել կամ հանել պատվեր**– Պատվեր, որը նախատեսում է Պատվերի անմիջապես կատարում՝ նրանում նշված գնով և լրիվ քանակով, հակառակ դեպքում Պատվերը չընդգրկելով Պատվերների հերթում:
- **Պահել հերթում մինչև բավարարումը պատվեր** – Պատվեր, որը նախատեսում է, որ Պատվերը կարող է մնալ հերթում՝ մինչև Պատվերում նշված լրիվ քանակով արժեթղթերի գնումը կամ վաճառքը:
- **Լիմիտային պատվեր**– առքի դեպքում պատվերում նշված գնով կամ դրանից ավելի ցածր գնով (վաճառքի դեպքում՝ պատվերում նշված գնով կամ դրանից ավելի բարձր գնով) որոշակի ծավալի արժեթղթի առքի (վաճառքի) պատվեր:
- **Շուկայական պատվեր**– շուկայում տվյալ պահին ձևավորված գնով որոշակի ծավալի արժեթղթի առքի (վաճառքի) պատվեր:
- **Գնման/վաճառքի ստոպ պատվեր**– Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում (արժեթղթերի առք/վաճառք) ՝ նրանում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ արժեթղթի գինը հասնելու դեպքում:
- **Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր**– Պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով:
- **Էլեկտրոնային առևտրային համակարգ**– հեռացված տերմինալի միջոցով ժամանակի իրական ռեժիմում Կարգավորվող շուկաների առևտրային հարթակներին հասանելիություն ապահովող ծրագրային համակարգ և/կամ բջջային հավելված:
- **Առևտրային նստաշրջան**– Առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում Էլեկտրոնային առևտրային համակարգով տվյալ Կարգավորվող շուկայի առևտրի կանոններով սահմանված կարգով իրականացվում են Արժեթղթերով գործարքներ:
- **Մարժինալ գործարք**– Բանկի կողմից Հաճախորդին փոխառությամբ տրամադրված դրամական միջոցների և/կամ արժեթղթերի օգտագործմամբ արժեթղթերի առքի և/կամ վաճառքի գործարք:
- **Մարժայի մակարդակ**– տոկոսային ցուցանիշ է, որն իրենից ներկայացնում է Հաճախորդի սեփական ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների կազմում: Մարժայի մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՄՄ} = \frac{\text{ՀԴՄ}+\text{ՀԱԱ}-\text{ՓՄ}}{\text{ՀԴՄ}+\text{ՀԱԱ}} \times 100$$

  որտեղ՝
  ՀԴՄ- Բանկի բրոքերային հաշիվներում հաշվառվող Հաճախորդի դրամական միջոցներն են, ինչպես նաև կնքված գործարքների արդյունքում ակնկալվող դրամական միջոցները՝ բացառությամբ նախկինում կնքված բրոքերային գործարքների համար վճարվելիք դրամական միջոցների,
  ՀԱԱ- Հաճախորդի արժեթղթերի շուկայական արժեքն է, որոնք Բանկի կողմից ընդունվում են որպես ապահովում մարժինալ գործարքի արդյունքում տրամադրված փոխառության դիմաց,
  ՓՄ- Մարժինալ գործարքի արդյունքում Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված փոխառու միջոցների գումարն է:
- **Սահմանափակող մարժա**– Հաճախորդների համար սահմանվող մարժայի մակարդակ: Բրոքերը չի կարող Հաճախորդի Պատվերների հիման վրա իրականացնել այնպիսի գործարքներ, որոնց արդյունքում Մարժայի մակարդակը կնվազի Սահմանափակող մարժայի մեծությունից:
- **Պահանջի ներկայացման (margin call) մակարդակ**– Մարժայի մակարդակ, որի դեպքում Բրոքերը Հաճախորդին ներկայացնում է Բանկում սպասարկվող Բրոքերային հաշիվը համապատասխան դրամական միջոցներով համալրելու պահանջ:
- **Դիրքի հարկադիր փակման մակարդակ**– Մարժայի մակարդակ, որի դեպքում Բրոքերը, առանց Հաճախորդի կողմից համապատասխան Պատվերի ստացման, մասամբ փակում է Մարժինալ գործարքի արդյունքում բացված դիրքը՝ հասցնելով վերջինս **margin call** մակարդակին:
- **Պլանային դիրք**– Հաճախորդի ընթացիկ Դիրքն է՝ հաշվի առնելով կնքված, բայց դեռևս չկատարված գործարքների գծով սպասվող մուտքերն ու ելքերը:
- **Բաց Դիրք**– Արժեթղթերով և Ածանցյալ գործիքներով կնքված գործարքների արդյունքում առաջացող Հաճախորդի ակտիվների և պարտավորությունների անհամապատասխանությունը:
- **Ածանցյալ գործիք**– Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված արժեթուղթը, որը թույլատրված է Կարգավորվող շուկայում առևտրին:
- **Բազիսային ակտիվ**– Ածանցյալ ֆինանսական գործիքի հիմքում ընկած ակտիվ:

- **Երաշխիքային գումար**– Հաճախորդի կողմից Բանկի նկատմամբ Ածանցյալ ֆինանսական գործիքներով իրականացված գործարքների գծով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Բանկում բացված բրոքերային հաշվին պարտադիր մուտքագրման ենթակա գումար:
- **Երաշխիքային միջոցներ**– Հաճախորդի կողմից Ածանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքի արդյունքում առաջացող պարտավորությունների ապահովման նպատակով վերջինիս կողմից ներդրված դրամական միջոցները կամ արժեթղթերը:
- **Պարգևավճար**– Օպցիոն գնորդի հաշվից փոխանցման ենթակա գումար, որը վճարվում է Օպցիոնի կնքման դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Օպցիոնի բնութագրով:
- **Պայմանագրի իրականացում**– Ածանցյալ ֆինանսական գործիքի բնութագրով և Կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով կողմերի ստանձնած իրավունքների և պարտավորությունների դադարման գործընթաց:
- **Վարիացիոն մարժա**– Առևտրային նստաշրջանի արդյունքներով Ածանցյալ ֆինանսական գործիքներով ունեցած Բաց դիրքերի գծով Հաճախորդի հաշվից դուրս գրման կամ մուտքագրման ենթակա գումար: Վերջինիս հաշվարկման մեխանիզմը սահմանվում է Առևտրային համակարգի կանոններով և/կամ տվյալ Ածանցյալ ֆինանսական գործիքի բնութագրով: Վարիացիոն մարժայից բացի, ռիսկերի կառավարման նպատակով, Բանկը հաշվարկում է Վարիացիոն մարժայի ընթացիկ մեծությունը, ելնելով Ածանցյալ ֆինանսական գործիքների ընթացիկ շուկայական գներից:
- **Քլիրինգ** – Առևտրային նստաշրջանի ժամանակահատված, որի ընթացքում տվյալ Կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով իրականացվում է Երաշխիքային գումարի ընթացիկ արժեքի գնահատում Հաճախորդի Բաց դիրքերի գծով և Վարիացիոն մարժայի մուտքագրում/ելքագրում Հաճախորդի հաշվին/հաշվից:
- **Ֆյուչերս**– Ածանցյալ ֆինանսական գործիք, որն իրենից ներկայացնում է ստանդարտացված պայմաններով կնքվող Բազիսային ակտիվի առք ու վաճառքի պայմանագիր, որը ենթադրում է պարտավորությունների կատարումը ապագայում Առևտրային համակարգի կանոններով և տվյալ Ֆյուչերսի բնութագրով սահմանված ժամկետների և պայմանների համաձայն:
- **Օպցիոն**– Ածանցյալ ֆինանսական գործիք է, որի գնորդը իրավունք է ստանում (առանց պարտավորության) նախապես սահմանված պայմաններով և ժամկետներում օպցիոն վաճառողից գնել կամ նրան վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, իսկ օպցիոն վաճառողը ստանձնում է պարտավորություն գնորդի պահանջի դեպքում նախապես սահմանված պայմաններով և ժամկետներում գնել կամ վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը:
- **Օպցիոնի/Ֆյուչերսի մարում**– Կարգավորվող շուկայի կանոններով և բնութագրով սահմանված կարգով Օպցիոնի/Ֆյուչերսի Իրականացում:
- **Օրենք**– «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

Սույն Կանոններում օգտագործվող այլ հասկացությունները, սահմանված չլինելու դեպքում, ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ եթե այդպիսինը դրանցով սահմանված չէ՝ միջազգային գործարար սովորույթների համաձայն այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

3. Տեղեկություններ բանկի մասին

3.1. Լրիվ անվանումը՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն:
3.2. Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 44/2:
3.3. Պետական գրանցումը՝ 02/10/1991թ., գրանցման համարը՝ 27:
3.4. Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա թիվ 27:
3.5. Էլեկտրոնային հասցեն՝ investsecurities@evoca.am
3.6. ինտերնետային կայքը՝ www.evoca.am,
հեռախոսահամարը՝ +374 10 605555 (1536, 1539):
3.7. Բանկը բրոքերային ծառայությունների մատուցումը համատեղում է Օրենքով նախատեսված այլ տեսակի ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունների մատուցման, ինչպես նաև Բանկային գործունեության հետ:
3.8. Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

4. Հաճախորդին ներկայացվող տեղեկություններ

4.1. Բանկը, ի դեմս Բրոքերի, մինչև Պայմանագիր կնքելը, Հաճախորդին է ներկայացնում հետևյալ տեղեկությունները՝
1. Բանկի և վերջինիս կողմից առաջարկվող բրոքերային ծառայությունների մասին,
2. Արժեթղթերի տեսակների և հնարավոր ռիսկերի մասին,
3. Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի և միջնորդավճարների մասին:
4. Օրենքով և համապատասխան իրավական ակտերով նախատեսված այլ տեղեկություններ:

5. Հաշիվների բացումը և պայմանագրի կնքումը

5.1. Բանկը, ի դեմս Բրոքերի, նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը, Հաճախորդից պահանջում է տեղեկություններ վերջինիս՝ Ներդրումային ծառայություններից օգտվելու գիտելիքների ու փորձի վերաբերյալ (Հավելված RUL15-0004-05_1_2):

5.2. Այն դեպքում, երբ Բրոքերը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ տվյալ ծառայությունը կամ Արժեթուղթը չեն համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա նա զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:

5.3. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում Կանոնների 5.1. կետում նշված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Բրոքերը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ վերջինիս վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք տվյալ ծառայությունը կամ Արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

5.4. Բրոքերը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, հաշվի առնելով ՀՀ Կենտրոնական բանկի 4/06 և 4/07 կանոնակարգերի պահանջները, դասակարգում է վերջինիս որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ, ընդ որում Հաճախորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը դասակարգման արդյունքների վերաբերյալ, եթե վերջինս համաձայն է դասակարգման արդյունքների հետ (Հավելված RUL15-0004-05_1_3, RUL15-0004-05_1_4):

5.5. Սույն Կանոնների 5.1. կետում նախատեսված տեղեկությունները Հաճախորդի կողմից ստանալուց հետո Բրոքերն առաջարկում է Հաճախորդին Բանկում բացել բրոքերային (ՀՀ դրամով և/կամ արտարժույթով) և դեպո հաշիվներ՝ Բանկի համապատասխան ներքին ընթացակարգերով սահմանված կարգով:

5.6. Հաշիվներ բացելու վերաբերյալ Հաճախորդի համաձայնությունը ստանալուց հետո, վերջինս ստորագրում է Բրոքերային և դեպո հաշվի բացման դիմումը (Հավելված RUL15-0004-05_1_1), որից հետո Հաճախորդի անունով բացվում են բրոքերային և/կամ դեպո հաշիվներ և կնքվում է Պայմանագիրը: Վերջինիս ուժի մեջ մտնելու պահից Հաճախորդն իրավունք է ստանում Բանկում բացված իր հաշիվներին փոխանցել դրամական միջոցներ և/կամ Արժեթղթեր, ինչպես նաև Կանոններով սահմանված կարգով Բանկ ներկայացնել Պատվերներ:

5.7. Բանկի EvocaINVEST ներդրումային հավելվածի օգտատեր հանդիսացող Հաճախորդները բրոքերային և/կամ դեպո հաշիվները կարող են բացել նաև առցանց եղանակով՝ Բանկի EVOCATOUCH հավելվածում EvocaINVEST հավելվածի օգտատեր դառնալու հայտը ներկայացնելով և հավելվածի հրահանգներին հետևելով:

5.8. Բանկի հետ Պայմանագիր կնքելիս իրավաբանական անձ Հաճախորդը պետք է ներկայացնի նաև իրավաբանական անձի անունից Պատվերներ ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց ցուցակը, նրանց ստորագրությունների նմուշները և անձնագրերի պատճենները:

6. Պատվերի ձևը և դրա ներկայացման կարգը

6.1. Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերը :

6.2. Պատվերի ձևը ներկայացված է RUL15-0004-05_1_5 Հավելվածում: Պայմանագրով կարող են նախատեսվել այլ տեղեկություններ՝ սահմանված Բանկի և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:

6.3. Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձ հանդիսացող Հաճախորդներին պետական պարտատոմսերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման դեպքում կողմերը կարող են կնքել «ՀՀ պետական (գանձապետական) և ՀՀ Կենտրոնական բանկի պարտատոմսերով գործառնությունների իրականացման ընդհանուր պայմանների մասին» Գլխավոր համաձայնագիր, որի դեպքում կողմերի միջև իրավահարաբերությունները կարգավորվում են այդ համաձայնագրի դրույթներով այնքանով, որքանով չեն հակասում սույն Կանոններին: Նշված համաձայնագրի համաձայն ներկայացված պարտատոմսերով գործարք կնքելու առաջարկը դիտվում է որպես սույն Կանոնների համաձայն ներկայացված Պատվեր և

յուրաքանչյուր Պատվերի համար Հաճախորդից գանձվում է համապատասխան բրոքերային միջնորդավճար:

6.4. Հաճախորդի կողմից Պատվերները կարող են ներկայացվել հետևյալ եղանակներով՝

6.4.1. **Թղթային, ներառյալ՝ փաստաթղթերի փոխանցումը փոստով):** Թղթային եղանակով Պատվերը ներկայացնելու դեպքում ստուգվում է Պատվերը ներկայացնող անձի լիազորությունները: Թղթային ձևով պատվերը ներկայացվում է 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Բանկում, մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և Բրոքերի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին: Հաճախորդի կողմից Պատվերի թղթային տարբերակի ներկայացման պահ է համարվում Բրոքերի կողմից այն ընդունելու պահը: Պատվերը Բանկի կողմից ընդունված է համարվում Բրոքերի կողմից այն ընդունելու մասին նշում կատարելու պահից:

6.4.2. **Էլեկտրոնային:** Էլեկտրոնային եղանակով Պատվերը պետք է ուղարկվի սույն Կանոնների 3.5. կետում նշված էլեկտրոնային հասցեներով: Այլ հասցեով ուղարկված Պատվերը համարվում է չստացված: Հաճախորդի կողմից էլեկտրոնային եղանակով Պատվեր ներկայացնելու դեպքում, Բրոքերը Հաճախորդին ուղարկում է Պատվերի ընդունման կամ մերժման մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն՝ Պատվերի ստացման պահից 15 րոպեի ընթացքում: Բրոքերի կողմից Պատվերների ընդունման կամ մերժման հաղորդագրությունները Հաճախորդին են ուղարկվում նախապես տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներով: Էլեկտրոնային եղանակով ուղարկված Պատվերն ընդունված է համարվում Բրոքերի կողմից դրա ընդունման վերաբերյալ համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման պահից: Հաճախորդը պետք է (հնարավորության դեպքում) 7 աշխատանքային օրվա ընթացքում Բանկ փոխանցի Էլեկտրոնային փոստով ուղարկված Պատվերի բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված Պատվերը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան Պատվերի բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված Պատվերի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում էլեկտրոնային փոստով ուղարկված տարբերակը:

6.4.3. **Հեռախոսով:** Հաճախորդի կողմից հեռախոսով Պատվերը կարող է ընդունվել, եթե այն ներկայացվել է Հաճախորդի նախնական համաձայնությամբ և Բանկի կողմից տեխնիկական հագեցվածության պահանջների պահպանման դեպքում (հեռախոսազրույցը պետք է պատշաճ ձևով ձայնագրվի, մասնավորապես պետք է գրանցվի պատվերի բովանդակությունը և այն ներկայացնելու փաստը): Հեռախոսով Պատվեր փոխանցելու նպատակով Հաճախորդին տրամադրվում է հատուկ գաղտնագիր (կոդային աղյուսակ): Գաղտնագրի տարածման պատասխանատվությունը երրորդ անձանց կրում է Հաճախորդը: Հեռախոսով Պատվեր փոխանցելու համար Հաճախորդը Բրոքերի հարցումը ստանալուց հետո պետք է հայտնի գաղտնագիրը (կոդային աղյուսակի համապատասխան կոդը) և անուն ազգանունը (անվանումը): Անձը, որը հեռախոսով հայտնել է գաղտնագիրը և Հաճախորդի անուն, ազգանունը (անվանումը) Բանկի կողմից դիտարկվելու է որպես Հաճախորդ: Պատվերը ներկայացնելիս Հաճախորդը արտասանում է Պատվերի պայմանները, որից հետո Բրոքերը կրկնում է դրանք, իսկ Հաճախորդը «հաստատում եմ» բառի արտասանմամբ հաստատում է Բրոքերի կողմից Պատվերի պայմանները ճշգրիտ ընկալելու փաստը: Հաճախորդը պետք է (հնարավորության դեպքում) 7 աշխատանքային օրվա ընթացքում Բանկ փոխանցի Հեռախոսով փոխանցված Պատվերի բնօրինակը: Հեռախոսով փոխանցված Պատվերն ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան Պատվերի բնօրինակը:

6.4.4. **Էլեկտրոնային առևտրային համակարգով**: Հաճախորդը կարող է Պատվեր ներկայացնել նաև Բանկի կողմից տրամադրվող Էլեկտրոնային առևտրային համակարգերով **(**այդ թվում **QUIK, EvocaINVEST** համակարգերով**)**: Էլեկտրոնային առևտրային համակարգ մուտքագրված Պատվերի ընդունման պահ է համարվում համակարգի կողմից այդ պատվերի մուտքագրման ֆիքսված պահը: Էլեկտրոնային առևտրային համակարգ մուտքագրված Պատվերի բնօրինակը Բանկ ներկայացնելու անհրաժեշտություն չկա :

6.5. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի Պատվերի ընդունումը հետևյալ դեպքերում.

6.5.1. Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կասկածի դեպքում,

6.5.2. Սույն Կանոնների RUL15-0004-05_1_5 Հավելվածով սահմանված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված Պատվերի դեպքում,

6.5.3. Եթե Հաճախորդի դրամական միջոցները կամ արժեթղթերը, որոնց նկատմամբ տրվել է Պատվերը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ կալանքի տակ են գտնվում (արգելադրված են),

6.5.4. Եթե Հաճախորդի հաշիվներում բացակայում են համապատասխան դրամական միջոցները (ներառյալ՝ գործարքի կնքման համար անհրաժեշտ միջնորդավճարները) և/կամ Արժեթղթերը, ընդ որում՝ միջնորդավճարները գանձվում են բացառապես Հաճախորդի դրամային բանկային հաշվից,

6.5.5. Եթե Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի ներդրումային փորձին և նպատակներին,

6.5.6. Պատվերում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրությանն ու Կանոններին անհամապատասխանության դեպքում:

6.6. Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված Պատվերը կամ դրանում՝ ըստ Պատվերի գնային, քանակական կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե տվյալ Պատվերով գործարք դեռևս չի կնքվել:

6.7. Նախկինում թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված Պատվերի փոփոխությունն իրականացվում է Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող նոր Պատվերի հիման վրա, որի մեջ Հաճախորդը պետք է նշում կատարի նախկին Պատվերը չեղյալ համարելու մասին: Հեռախոսով ընդունված Պատվերի փոփոխությունն իրականացվում է հեռախոսով, ինչպես նաև թղթային կամ էլեկտրոնային եղանակով այդպիսի փոփոխություն իրականացնելու համար սահմանված կարգով: Էլեկտրոնային առևտրային համակարգ մուտքագրված Պատվերի փոփոխությունը կատարվում է համակարգ մուտքագրված պատվերի խմբագրման միջոցով: Ընդ որում՝ Պատվերների հաշվառման նպատակով որպես ներկայացված Պատվեր ընդունվում է տվյալ Պատվերի վերջին խմբագրված տարբերակը, բացառությամբ թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված Պատվերի փոփոխության:

6.8. Նախկինում թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված Պատվերի հետ կանչումն իրականացվում է Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող դիմումի հիման վրա: Հեռախոսով ընդունված Պատվերի հետ կանչումն իրականացվում է հեռախոսով, ինչպես նաև թղթային կամ էլեկտրոնային եղանակով հետ կանչում իրականացնելու համար սահմանված կարգով: Էլեկտրոնային առևտրային համակարգ մուտքագրված Պատվերի հետ կանչումը կատարվում է համակարգ մուտքագրված պատվերի հանման միջոցով: Ընդ որում՝ Պատվերների հաշվառման նպատակով հեռախոսով հետ կանչված և համակարգից հանված Պատվերները չեն դիտարկվում:

6.9. Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի Պատվերը կատարելուց այն դեպքում, երբ Պատվերի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայական իրավիճակների, գործարար շրջանառության սովորույթների և այլնի հետ:

6.10. Պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում Բանկն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ վերջինիս Պատվերը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում ուղարկելու միջոցով:

7. Գործարքների կնքման և կատարման կարգը

7.1. Բրոքերը Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերի ընդունումից հետո այդ Պատվերների էական պայմանները մուտքագրում է Պատվերների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանում:

7.2. Բանկի կողմից գործարքները կնքվում են.

7.2.1. *Կարգավորվող շուկայում՝* Բանկի կողմից տվյալ Կարգավորվող շուկայում կազմակերպվող առևտրի ընթացքում Արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով.

7.2.2. *Չկարգավորվող շուկայում՝* Բանկի կողմից արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:

7.3. Կարգավորվող շուկայում Բանկի կողմից գործարքները կնքվում և կատարվում են Կարգավորվող շուկայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:

7.4. Չկարգավորվող շուկայում գործարքները Բանկի կողմից կատարվում են Արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ և այն երկրի օրենսդրության համաձայն, որտեղ կնքվում է այդ գործարքը:

7.5. Հաճախորդի Պատվերը կատարելու համար Բանկն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից:

7.6. Թույլատրվում է իրականացնել պատվերի կատարումը մաս առ մաս, եթե Պատվերով այլ բան նախատեսված չէ:

7.7. Լիմիտային պատվերները Բանկի կողմից կատարվում են կախված շուկայի ընթացիկ իրավիճակից:

7.8. Բրոքերը իրավունք ունի կատարել լիմիտային պատվերն ավելի շահավետ պայմաններով, քան նշված է Պատվերում: Այդ դեպքում Հաճախորդի նշած գնի և կատարման գնի տարբերության կեսը հանդիսանում է լրացուցիչ պարգևավճար Բանկի համար, որը գանձվում է Բանկի կողմից, Հաճախորդի՝ Բանկում բացված ընթացիկ դրամային հաշվից:

7.9. Հաճախորդի Պատվերի հիման վրա կնքված գործարքների էական պայմանները Բրոքերի կողմից մուտքագրվում են Կատարված գործարքների էլեկտրոնային գրանցամատյանում:

7.10. Գործարքը կնքելուց հետո Բրոքերի կողմից կազմվում է Գործարքի վավերագիրը (Հավելված RUL15-0004-05_1_6) 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը տրամադրվում է Պատասխանատու աշխատակցին, իսկ մյուս օրինակը «Ընդունված է» նշագրմամբ, ընդունման ժամանակի նշումով և Պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ վերադարձվում է Բրոքերին: Գործարքի վավերագիրը Պատասխանատու աշխատակցին է ներկայացվում տվյալ Գործառնական օրվա ընթացքում, եթե գործարքը կնքվել է մինչև տվյալ Գործառնական օրվա ավարտը: Տվյալ Գործառնական օրվա ավարտից հետո կնքված Գործարքի վավերագիրը Պատասխանատու աշխատակցին է ներկայացվում մինչև տվյալ գործարքի կնքմանը հաջորդող Գործառնական օրվա ժամը 12:00-ն:

7.11. Գործարքի վավերագիրը ստանալուց հետո նույն Գործառնական օրվա ընթացքում Պատասխանատու աշխատակիցը իրականացնում է գործարքի գծով վերջնահաշվարկը և կատարում համապատասխան ձևակերպումները: Եթե գործարքի կնքման և վերջնահաշվարկի օրերը տարբեր են, ապա գործարքի գծով համապատասխան ձևակերպումները կատարվում են տվյալ գործարքի վերջնահաշվարկի օրը:

7.12. Եթե Բրոքերային հաշիվների արժույթները չեն համապատասխանում Պատվերով կնքված գործարքով վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ արժույթին կամ Պատվերով գործարքի կատարման արժույթով Հաճախորդի հաշվի մնացորդը չի բավարարում համապատասխան Պատվերով գործարքի վերջնահաշվարկը կատարելու համար, ապա Բանկը համապատասխան Պատվերով գործարքի վերջնահաշվարկի կատարման համար իրականացնում է համապատասխան արժութային փոխարկումը՝ տվյալ օրվա դրությամբ Բանկում սահմանված կամ Հաճախորդի հետ փոխհամաձայնեցված արժույթների փոխարժեքին համապատասխան:

7.13. Հաճախորդի կողմից տրված Պատվերի վերջնահաշվարկն իրականացվում է առանց Հաճախորդից լրացուցիչ հանձնարարականներ ստանալու: Պատվերը ինքնաբերաբար հանդիսանում է նաև Հաճախորդի միջոցներով վերջնահաշվարկ կատարելու հանձնարարական:

8. Մարժինալ և ածանցյալ գործիքներով գործարքների կնքման կարգը

8.1. Մարժինալ գործարքներ կնքելու համար Հաճախորդը պետք է Բանկի հետ կնքի Արժեթղթերով մարժինալ գործարքների կնքման համաձայնագիր: Նշված համաձայնագիրը Բանկի և Հաճախորդի միջև կնքվում է միայն այն դեպքերում, եթե տվյալ Հաճախորդը Բանկի կողմից դասակարգվել է որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ և եթե Բանկի կարծիքով ներդրումային բնագավառում Հաճախորդի գիտելիքներն ու փորձը բավարար են նման ծառայությունից օգտվելու համար:

8.2. Հաճախորդի կողմից Բրոքերին տրված Պատվերը համարվում է Մարժինալ գործարքի կնքման Պատվեր, եթե Պատվերի հիման վրա կնքվելիք գործարքի ծավալը գերազանցում է Հաճախորդի Պլանային դիրքի մեծությունը:

8.3. Եթե կնքված գործարքի գծով վերջնահաշվարկի իրականացման ժամանակ Հաճախորդի Բրոքերային և/կամ Դեպո հաշվում առկա դրամական միջոցները/արժեթղթերը չեն բավարարում բրոքերային գործարքներից բխող պարտավորությունների ամբողջական կատարմանը, ապա Հաճախորդի մոտ Բանկի նկատմամբ առաջանում է պարտավորություն:

8.4. Հաճախորդի մոտ դրամական միջոցների և/կամ արժեթղթերի գծով պարտավորությունների առաջացման դեպքում Բանկը Հաճախորդին տրամադրում է Փոխառություն Հաճախորդի կողմից համապատասխան ապահովվածության տրամադրման պայմանով, որը սահմանվում է Բանկի և Հաճախորդի միջև կնքված Արժեթղթերով մարժինալ գործարքների կնքման համաձայնագրով:

8.5. Բանկի կողմից Փոխառության տրամադրման պայմանները, ինչպես նաև համապատասխան մարժայի մակարդակները, սահմանվում են Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներով:

8.6. Բանկի հետ Արժեթղթերով մարժինալ գործարքների կնքման համաձայնագիր կնքած Հաճախորդ/ներ/ին տրամադրման ենթակա փոխառության առավելագույն սահմանաչափը սահմանելու նպատակով Ներդրումային գործառնությունների բաժինը Բանկի Վարչության նախագահին համապատասխան զեկուցագիր է ներկայացնում: Վարչության նախագահի կողմից մակագրված զեկուցագրի հիման վրա Ներդրումային գործառնությունների բաժինը տվյալ Հաճախորդ/ներ/ին տրամադրում է համապատասխան փոխառու միջոցների սահմանաչափ:

8.7. Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կարող են կնքել միայն Բանկի կողմից որպես Պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդները :

8.8. Բանկը Հաճախորդի կողմից Բրոքերին հաղորդված Պատվերի հիման վրա կնքում է Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ պայմանով, որ Հաճախորդի Բրոքերային հաշվին առկա են Երաշխիքային գումարի (ԵԳ), Վարիացիոն մարժայի ընթացիկ մակարդակի, միջնորդավճարների և տվյալ գործարքի կնքման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցման համար անհրաժեշտ համապատասխան դրամական միջոցները:

8.9. Բանկը չի ընդունում ակտիվի իրական առաքմամբ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքման Պատվերներ, որոնց Բազիսային ակտիվ է հանդիսանում ապրանք /թանկարժեք մետաղներ, նավթամթերք և այլն/:

8.10. Մինչև Պատվեր ներկայացնելը Հաճախորդը պարտավոր է ինքնուրույն, Բանկից ստացված տեղեկատվության հիման վրա, հաշվարկել Բանկ ներկայացվող յուրաքանչյուր Պատվերի առավելագույն ծավալը: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից սեփական Դիրքերից ավել ծավալով կնքված գործարքի/ների արդյունքում առաջացող հնարավոր վնասների համար:

8.11. Եթե վերջնահաշվարկի իրականացման պահին, Հաճախորդի Պլանային դիրքում բացակայում են անհրաժեշտ քանակությամբ արժեթղթեր և/կամ դրամական միջոցներ, Բանկն իրավասու է մասամբ կամ ամբողջությամբ դադարեցնել Հաճախորդի կողմից նախկինում ներկայացված պատվերների կատարումը, տվյալ գործարքի գծով վերջնահաշվարկն իրականացնելու նպատակով:

8.12. Եթե Քլիրինգային նստաշրջանի ավարտի արդյունքներով Հաճախորդի մոտ առաջանում է պարտավորություն ԵԳ-ի գծով, ապա վերջինս պարտավոր է մարել առաջացած պարտավորությունը:

8.13. Հաճախորդի, Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պարտավորության չափը որոշելու նպատակով, ԵԳ-ի գծով պարտավորություն ասելով հասկացվում է՝ Հաճախորդի բոլոր Բաց դիրքերի գծով մուտքագրման ենթակա Երաշխիքային միջոցների, Օպցիոնների գծով վճարվելիք պարգևավճարների, Վարիացիոն մարժայի, այլ հնարավոր վճարների և Հաճախորդի Բրոքերային հաշվում հաշվառվող դրամական միջոցների տարբերության բացարձակ արժեքը:

8.14. Հաճախորդի կողմից 8.12. կետի պահանջները չկատարելու դեպքում Բանկն իրավասու է իրականացնել Հաճախորդի չապահովված դիրքերի Հարկադիր փակում:

8.15. 8.14. կետի համաձայն իրականացված հարկադիր փակումը Բանկի կողմից դիտվում է որպես Բանկին տրամադրված Պատվեր և վերջինիս կատարման համար Հաճախորդից գանձվում է համապատասխան սակագին:

8.16. Դիրքի Հարկադիր փակման ժամանակ, Բանկն ընտրում է փակման ենթակա Դիրքերն այն կերպ, որպեսզի փակվող Դիրքերի քանակը լինի նվազագույնը և բավարարի ԵԳ-ի գծով պարտավորության ամբողջական մարմանը:

8.17. Եթե Հաճախորդն ունի Ֆյուչերսով Բաց դիրք, որը նախատեսում է արժեթղթի իրական առաքում, ապա տվյալ պայմանագրի Իրականացման համար, Հաճախորդը տվյալ Ֆյուչերսի շրջանառության ժամկետի ավարտից առնվազն 2 աշխատանքային օր առաջ պարտավոր է իր համապատասխան հաշվին ապահովել պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցները:

8.18. Եթե Հաճախորդն ունի Բաց դիրք Օպցիոն պայմանագրի գծով, որի Բազիսային ակտիվ է հանդիսանում Ֆյուչերսային պայմանագիրը, ապա վերջինս, Օպցիոն պայմանագրի շրջանառության ժամկետի ավարտից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ պարտավոր է իր համապատասխան հաշվին ապահովել Օպցիոն պայմանագրի կատարման արդյունքում կնքվող Ֆյուչերսային պայմանագրի համար անհրաժեշտ ԵԳ-ի և այլ միջնորդավճարների չափով դրամական միջոցներ:

8.19. Ակտիվի իրական առաքմամբ Ածանցյալ ֆինանսական գործիքների Մարումն իրականացվում է տվյալ գործիքի բնութագրով, Կարգավորվող շուկայի և սույն Կանոններով նախատեսված կարգով:

8.20. Հաճախորդի կողմից Ածանցյալ ֆինանսական գործիքի իրականացումից հրաժարվելու դեպքում, Բանկն իրավասու է անակցեպտ կարգով գանձել բոլոր միջնորդավճարները՝ համաձայն Սակագների:

8.21. Վարիացիոն մարժայի գծով Հաճախորդի հաշվի կարգավորումներն իրականացվում են Բանկի գործընկեր հանդիսացող կազմակերպությունից ստացված համապատասխան հաշվետվության հիման վրա:

8.22. 8.21. կետում նշված հաշվետվությունը ստանալուց հետո Պատասխանատու աշխատակիցը իրականացնում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ (Հաճախորդի հաշվին մուտքագրվում կամ հաշվից ելքագրվում է Վարիացիոն մարժայի գումարը):

9. Հաճախորդին ռիսկի բարձր մակարդակ ունեցող հաճախորդների ցանկում ընդգրկելու կարգը

9.1. Սույն գլուխը կարգավորում է Մարժինալ գործարքների իրականացման շրջանակներում Հաճախորդին տրամադրվող փոխառության սահմանաչափի որոշման նպատակով Բանկի կողմից Հաճախորդին ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդների ցանկում ընդգրկելու գործընթացը:

9.2. Ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդ դասակարգվելու համար անհրաժեշտ է՝

1. Հաճախորդը Բանկի հետ ունենա արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայություններից օգտվելու առնվազն 6 ամսվա փորձ,
2. որոշման կայացմանն անմիջապես նախորդող 3 ամիսների ընթացքում Հաճախորդը օգտվի Բանկի Մարժինալ վարկավորման ծառայություններից:

9.3. Եթե Հաճախորդն օգտվել է 9.2. կետի 1-ին ենթակետում նշված ծառայություններից նշված ենթակետով սահմանված ժամկետներից շեղումով ի վնաս Հաճախորդի, ապա վերջինս Բանկ է ներկայացնում այլ կազմակերպության հետ կնքված արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի/երի, ինչպես նաև տվյալ կազմակերպության հետ կնքված, Հաճախորդին ներկայացված, վերջին 3 (երեք) ամսվա ընթացքում 9.2. կետի 2-րդ ենթակետում նշված ծառայություններից օգտվելը հավաստող պայմանագրի/երի և/կամ հաշվետվությունների բնօրինակը/ները:

9.4. Ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդ դասակարգվելու համար Հաճախորդը Բանկ է ներկայացնում ազատ ոճով գրված դիմում:

9.5. Ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդի դասակարգումից հանելու համար հիմքերն են՝

9.5.1. Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված ազատ ոճով գրված դիմումը.

9.5.2. Բրոքերային ծառայությունների մատուցման Պայմանագրի խզումը, դադարեցումը.

9.5.3. Պայմանագրով ստանձնած և Կանոններով ամրագրված պարտավորությունների ոչ պատշաճ կատարում.

10. Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները

10.1. Եթե Բանկը կատարել է Հաճախորդի Պատվերը, ապա նա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով հաճախորդին տրամադրի պատվերի կատարման մասին հաշվետվություն (Հավելված RUL15-0004-05_1_7):

10.2. Եթե հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Բանկը Հաճախորդին է ներկայացնում պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

10.3. Հաշվետվությունները համարվում են ընդունված, եթե Հաճախորդը դրանք ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում գրավոր չի առարկում դրանց բովանդակության վերաբերյալ:

11. Տեղեկացումներ հնարավոր ռիսկերի վերաբերյալ

11.1. **Արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման հետ կապված ռիսկեր.**

11.1.1. Բանկը տեղեկացնում է Հաճախորդին այն մասին, որ Արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողը առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.

11.1.1.1. **Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ:** Արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Բանկի հսկողության տակ: Նշված պատճառով Արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը (մարժինալ գործարքների դեպքում հնարավոր կորուստները կարող են գերազանցել Հաճախորդի կողմից ներդրած սկզբնական գումարի մեծությունը):

11.1.1.2. **Իրացվելիության նվազման ռիսկ:** Այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների և առևտրային հարթակների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:

11.1.1.3. **Օրենսդրության փոփոխության ռիսկ:** Այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել կորուստներ:

11.1.1.4. **Ենթակառուցվածքային ռիսկ:** Այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեության

ընդհատումները կարող են բերել Հաճախորդի ակտիվների (ինչպես դրամական միջոցների, այնպես էլ Արժեթղթերի) կորուստների:

11.1.1.5. **Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր:** Այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, ինտերնետ պրովայդերների հետ կապված խնդիրների, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են առաջ բերել Հաճախորդի ակտիվների կորուստներ:

11.1.1.6. **Այլ ռիսկեր:** Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

11.2. **<u>Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման հետ կապված ռիսկեր.</u>**

11.2.1.1. Հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ ներդրումային գործունեությունը պարունակում է ռիսկեր՝ կապված մատուցվող ծառայությունների էլեկտրոնային բնույթի հետ, ինչպիսիք են, օրինակ, հուսալի կապի բացակայությունը, էլեկտրաէներգիայի անջատման հնարավորությունը, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարումը և այլն: Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության հետևանքով էլեկտրոնային առևտրի համակարգերի աշխատանքի ընդհատման համար: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության արդյունքում Բանկի և Հաճախորդի միջև փոխանցվող տեղեկատվության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու համար:

12. Փոփոխություններ և լրացումներ Կանոններում

12.1 Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

12.2 Սույն Կանոններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին տեղեկացումը Հաճախորդին կատարվում է նշված փոփոխությունները Բանկի ինտերնետային կայքում տեղակայելու միջոցով և ընդ որում կայքում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:

12.3 Կանոններում փոփոխություններին համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի մինչև դրանց ուժի մեջ մտնելը միակողմանիորեն խզել Պայմանագիրը, որի մասին Հաճախորդը գրավոր տեղեկացնում է Բանկին: Հաճախորդից ոչ մի առարկություն չունենալու դեպքում սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները դրանց ուժի մեջ մտնելու պահից Հաճախորդի համար դառնում են պարտադիր:

12.4 Բանկի կողմից սույն Կանոններում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելու պահից:

Հաստատված
Բանկի Վարչության
23/01/2023թ.թիվ 24
Արձանագրությամբ
ՈՒԺի մեջ է 17/07/2023թ.ից

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ
Ներդրումային գործառնությունների
Բաժնի պետ_____-ին

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման», «Արժեթղթերի պահառության գործունեության» կանոններին, ինչպես նաև տվյալ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերին՝ խնդրում եմ Ձեզ հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը իմ անունով բացել բրոքերային և/կամ դեպո հաշիվներ և իրականացնել դրանց սպասարկումը՝ Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում ներդրումները կապված են բազում ռիսկերի հետ և որ այդ ռիսկերը կրում եմ ես: Բանկը չի փոխհատուցելու իմ կրած վնասները, եթե դրանք չեն պատճառվել Բանկի կողմից անբարեխիղճ վարքագծի դրսևորման արդյունքում:

Դիմող՝

----------/----------/

---/---/2023թ.

Հաստատված
Բանկի Վարչության
31/10/2022թ.թիվ 41
Արձանագրությամբ
ՈՒժի մեջ է 01/12/2022թ.ից

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՓՈՐՁԸ

1. Ներդրումային ծառայություններից օգտվելու գիտելիքը և փորձը

- ☐ հարուստ
- ☐ բավարար
- ☐ կարճատև
- ☐ փորձը բացակայում է

2. Այն ներդրումային ծառայությունների տեսակները, որոնցից օգտվել է Հաճախորդը նախկինում

- ☐ բրոքերային ծառայություններ
- ☐ պահառության ծառայություններ
- ☐ արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ
- ☐ արժեթղթերով փոխառություն և վարկավորում
- ☐ այլ ծառայություններ, նշել _____

3. Արժեթղթերը, որոնցում Հաճախորդի կողմից կատարվել են ներդրումներ

- ☐ բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր
- ☐ պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր
- ☐ մուրհակներ
- ☐ ածանցյալներ
- ☐ ներդրումային հիմնադրամի փայեր
- ☐ այլ արժեթղթեր, նշել _____

_____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

Հաշվի առնելով տրամադրված տեղեկատվությունը՝ առաջարկում եմ -------- ----------ին դասակարգել որպես ---------- հաճախորդ :

Բրոքեր ----------
(ստորագրություն)

Ստորաբաժանման ղեկավար՝ հաստատում եմ ----------
(ստորագրություն)

Հաստատված
Բանկի Վարչության
31/10/2022թ.թիվ 41
Արձանագրությամբ
ՈՒԺի մեջ է 01/12/2022թ.ից

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից _____-ին
---------- Հաճախորդի դասակարգում շնորհելու վերաբերյալ

Սույնով հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» թիվ 4/07 կանոնակարգի, մինչև Հաճախորդի հետ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն պարտավոր է դասակարգել իր Հաճախորդներին, որպես Պրոֆեսիոնալ կամ Ոչ պրոֆեսիոնալ:

Համաձայն Ձեր կողմից տրամադրված տեղեկատվության, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման» թիվ 4/06 կանոնակարգի պահանջները, Բանկը դասակարգել է Ձեզ որպես ---------- հաճախորդ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգված հաճախորդների վրա չեն տարածվում համապատասխան իրավասու մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի՝ հաճախորդների պաշտպանությանն ուղղված որոշ դրույթներ:

Եթե Ձեր կարծիքով Ձեզ շնորհված դասակարգումը չի համապատասխանում Ձեր կողմից ռիսկի ընդունելի մակարդակին կամ տվյալ ոլորտում ձեր գիտելիքների մակարդակին և փորձառությանը՝ Դուք իրավասու եք գրավոր ձևով պահանջել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ից վերանայել Ձեզ շնորհված համապատասխան դասակարգումը:

Դասակարգման արդյունքների հետ համաձայն եմ_____(անուն ազգանուն)

--/--/20—թ.

Հաստատված
Բանկի Վարչության
31/10/2022թ.թիվ 41
Արձանագրությամբ
ՈՒժի մեջ է 01/12/2022թ.ից

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____, սույնով տալիս եմ իմ համաձայնությունը «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից որակվել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ, տեղյակ եմ, որ որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործելու իմ նկատմամբ և այդ պատճառով ես կորցնում եմ որոշակի պաշտպանվածություն:

---------- /_____/

----/----/20__ թ.

Հաստատված
Բանկի Վարչության
31/10/2022թ.թիվ 41
Արձանագրությամբ
ՈՒԺի մեջ է 01/12/2022թ.ից

Արժեթղթերի գնման/վաճառքի
Պատվեր N ----

Պատվերի տրման ժամանակը (ժամ/րոպե/օր/ամիս/տարի)
Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը N --
Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ 16600
Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ 16600

Գնային պայմանները՝_____ **Քանակական պայմանները՝ _____**

☐ Շուկայական հանձնարարական
☐ Գնման լիմիտային հանձնարարական
☐Վաճառքի լիմիտային հանձնարարական
☐ Գնման ստոպ հանձնարարական
☐ Վաճառքի ստոպ հանձնարարական
☐ Գնման ստոպ լիմիտային հանձնարարական
☐ Վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական

☐ Բավարարել լրիվ
☐ Բավարարել մասնակի
☐ Հանել մնացորդը

Ժամանակային պայմանները՝ _____

☐ Անմիջապես բավարարել կամ հանել
☐ Պահել հերթում մինչև բավարարումը

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական)	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Հատուկ ցուցումներ
1.	--	----	--	--	--

Հաճախորդ _____ Պատվերն ընդունեցի _____
(ստորագրություն) (ստորագրություն)

Հաստատված
Բանկի Վարչության
11/02/2026թ.
թիվ 05_01 արձանագրությամբ
Ուժի մեջ է 17/02/2026թ.ից

Գործարքի վավերագիր N_____

Վավերագրի լրացման ժամանակը (օր/ամիս/տարի/ժամ/րոպե) _____

Արժեթղթերի գնման/վաճառքի պատվեր N _____
___

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթի դասը	Գործարքի կնքման ժամանակը (ժամ/րոպե/օր/ամիս/տարի)	Գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական)	Գործարքի արժույթը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Գնված կամ վաճառված արժեթղթերի քանակը և գինը		Ընդհանուր ծավալը	Հանդիպակաց կողմի անվանումը կամ գործարքի համար հիմք հանդիսացած փաստաթղթի համարը և անվանումը	Գործարքի վերջնահաշվարկի պայմանները/գանձվող միջնորդավճարի մեծությունը
							քանակը	մեկ արժեթղթի գինը			

Բրոքեր ----------
(ստորագրություն)

Ստորաբաժանման ղեկավար՝----------
(ստորագրություն)

Հաստատված

Բանկի Վարչության
11/02/2026թ.
թիվ 05_01 արձանագրությամբ
Ուժի մեջ է 17/02/2026թ.ից

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Պատվերով գործարքի կնքման վերաբերյալ

_____ ___/_____/_____
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ օր/ամիս/տարի

N	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Գործարքի կնքման ժամանակը (րոպեն/ժամը/ օրը/ամիսը / տարին)	Պատվերի համարը և տրման ժամանակը (րոպեն/ժամը/ օրը/ ամիսը/տարին)	Պատվերի տեսակը/ Ածանցյալ գործիքի տեսակը /Ֆյուչերս/Օպցիոն/	Գործարքի կնքման վայրը	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը/ տարբերի չ ծածկագիրը/ Գործիքի կոդը	Գործարքի Արժույթը	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները

Վարչության նախագահ՝ ---------- (անուն, ազգանուն)
(ստորագրություն)